ուր ուրեմն յամին 1847 · 'ի Նեբքոյ բերդին է աւանն աղիւսակերտ, 100 տամբք կամ աւելի, յորս 40 տուն Հայոց և 25 Հրէից · որք Թուին 'ի գերուԹենէն զոր ած Բարզափրան զորավար Տիգրանայ Բէ · և գտանին հանգրուանք նոցա 'ի լերինս, որպէս և յարևմտից Պաշդալէի յ'8900' բարձու, և խաչնարածք են : — Յարևելից հիւսիսոյ կայ հին մենաստան Հայոց Գանդոֆիլիոն? կոչեցեալ յուղևորաց ոմանց, և այլ մենաստան մերձ նմին · որոց մին անշուշտ է վանքն Բարբ-ուլիդայ 'ի ՀԱԳԱՄԱԿԵՐՏ քաղաքի հնումն, 'ի Բարմա կամ ՅԱՐԽԱՆՈՍ տեղւոջ նահատակուԹեան Առաքելոյն Քրիստոսի : — Զվայրօքս սպան յամին 1829 Նուր Ուլլահ զգերմանացի ուղևորն հնախոյզ՝ զՇուլց որ նախ գաղափարեաց զբևեռագիր արձանս Վանայ : Ոչ սակաւ Հայք բնակեն 'ի կողմանքս, այլ և Հրեայք ոչ սակաւք, որք Թուին յոմանց 'ի հին գերուԹենէն Հրէից սերեալք, կամ 'ի գերուԹենէն Տիգրանայ Բէ : — Հարաւային արևելեան մասն Քրդաստանի՝ յարևմտից հարաւոյ ծովուն Որմիոյ՝ ՐԷՎԱՆՏԶՔ կոչի, և է գաւառ առանձին ընդ կուսակալուԹեամբ Մուսուլի, և կայ յելս սահմանաց աշխարհին Հայոց, երբեմն ընդ սոցա ձեռամբ գրաւեալ 'ի հնումն, և յաճախագոյն ընդ Ասորեստանեայց և Մարաց, և ապա Պարսից · և է նորա քաղաք համանուն պարսպապատ 'ի բարձրաւանդակի յեզր վտակի միոյ Զապայ, իբր 1300 տամբք, և վիճակք նորա քրդաբնակք · յորոց ելից կան բարձրաբերձ և պարաւոր լերինք անջրպետք Օսմանեան և Պարսկական գաւառաց, 'ի հնումն Զակրոս կոչեցեալ լերինք (12) և Նիհորական, առ որով ՆԻՀՈՐԱԿԱՆՆ երկիր մարզ Հայոց :

ՊԱՐՍԻԿ ՀԱՅԱՍՏԱՆ

101 · Պարսից իշխանուԹեան մանաւորեալ են 'ի Հայաստան երկրէ մեծ մասն մի Վասպուրական աշխարհի, 'ի հիւսիսոյ արևմտից · Պարսկահայք՝ 'ի հարաւոյ նորին, և փոքր մի մասն Կորդուաց · որք ըստ օրինաց Պարսից բաժանեալք են 'ի գաւառս կամ յիշխանուԹիւնս, զի գաւառապետքն՝ որպէս և նահանգապետքն նոցա Խան կոչին · և Թուին եօԹն գաւառք լինել 'ի մասինս Հայոց · զոր կոչեսցուք Հայկական նահանգ Պարսից, և են Մակու, Սէկմանապատ, Խոյ, Մարանդ, Սալամաս, Իւշնէ և Ուրմիա : Միւս ևս նահանգ Պարսից ըստ մասնէ Հայոց իշխանուԹեան է Արտաստական աշխարհ, որոյ մասն մի ևեԹ սեփականեալ էր մերոցս, որպէս Խաղտեացն աշխարհ, արտաքոյ բուն սահմանացն Հայոց Մեծաց · այլ քանզի չէն Ճշդեալք 'ի նախնեաց, սահմանք կրկին պետուԹեանց՝ Հայոց և Պարսից՝ յայսմ կողմանէ, և զի 'ի տեղագրի Պարսից աշխարհին 'ի տիեզերագրուԹեան մերում 'ի բաց Թողեալ էր մեր խսպառ զմեծ զայս նահանգ, հարկ կարևոր համարիմք յիշատակել ասա զգլխաւոր տեղիս նորին, Թէ և սակաւ մի անցանիցեմք ըստ բնիկ սահմանս Հայոց :

Ա. · ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱՀԱՆԳ ՊԱՐՍԻՑ

102 · Հիւսիսային արևմտեան ծայր երկրիս կայ ընդ մէջ Պայեզիտոյ՝ յարևմտից, և հարաւոյ Մասեաց և Երասխայ յարևելից, և մինչև ցգետն Պալդ (80) սակաւածանօԹ է երկիր, և է վիճակ Մաքուայ · այսպէս կոչեցեալ յանուն ՄԱԿՈՒ կամ Մաքու քաղաքի որ 'ի ձախմէ գետոյն · որոյ է բերդ կամ ամուր ահեղ և ընդարձակ քարայր, կարկառեալ 'ի վերայ շինին, որում բաղում խնամով զգուշանան Պարսք, ոչ ումեք Թողեալ մտանել 'ի Նեբքս · այս տեղի Ծոկ Մաքուայ կոչի 'ի գիրս մեր, և Թուի հնուԹեանց և արձանագրուԹեանց լինել 'ի սմա : Աւանն կամ քաղաքն 'ի Նեբքոյ բերդին կայ 'ի զառէջս լերին անշքացեալ վասն բնակչացն Հայոց գաղթելոյ 'ի Ռուսս, և քայքայեալ 'ի սասանուԹենէն Արարատայ յամին 1840 : Ի հնումն ԱԿԷ և ԱՐՏԱՋ գաւառք էին յերկրի սոսա, և ՀԱՒԱՐՀԱՆ դաշտ և քաղաք էր դլխաւոր, ուր հովանոցք և զօրանիստք Թագաւորացն Հայոց, և ապարանք Սանտարկոյ, Թերևս 'ի նոյն խսկ կ սահմանս Մակուայ · անդ կատարեցաւ հանդէս նահատակուԹեան քրիստոսահրաւէր առաքելոյն Հայոց Թադէի և կուսին արքայդստեր Սանդխտոյ · մինչև ցայսօր ուխտատեղի են Վանք Թադէոսի բաղում ժամուք 'ի հիւսիսոյ Մակուայ առ դեռեղերքն 'ի ձորամիջի, որ կոչի և Ծորժոր կամ ԿԷԺ-Կանուն գեղջ մերձակայի · յորմէ Ծորժորեցի կոչեցաւ Յովհաննէս Երզնկացի, որ դադարէր 'ի սմա երբեմն առ Զաքարիայի առաջնորդի սորա · պատուի ընդ նմին և Սանդխտոյ շիրիմն 'ի մատրան միում : Կրկին սրբազան է տեղին և անդ յղուԹեամբ երկրորդի առաքելոյն Հայոց՝ սրբոյն Գրիգորի Լուսաւորչի, վասն որոյ և աԹոռ մեծի արքեպիսկոպոսի կարգեցաւ 'ի նախնեաց անտի : Միւս ևս անդամ հռչակասանծ գտաւ վիճակս արիական և մեծահռչակ նահատակուԹեամբ Վարդանանց յամին 451 'ի նմին Շաբուական դաշտի որ և Աւարայր կոչի, յելից հիւսիսոյ Մակուայ, զեղերքք Տղմուտ գետոյ, որ Թուի Աքլայ վտակ խառնեալ յԵրասխ, կայ անդ և ՀՃԱԿՆ ԱՔԼԱՅ : Այլ աւաղ, զի ոչ ոք ցարդ հետաքրքրեաց և ետ ծանօԹս Ճշգրիտս զցանկալի վայրացն, յորում կրօնք և հայրենիք միաբանեալ գործս սխրալիս կատարեցին յաւուրսն անդ հարստուԹեան Հայոց :